

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Նահապետեան Հ. Գ. — Քրիստոնեական
ճարտարապետութիւն (պատմական հետազո-
տութիւններ) 419
- Սաֆրաստեան Ա. — Խուրրի - Միտանի
և Խաթթիական լեզուները 431
- Նահապետ Շահիր. — Տաղ ի Ս. Խա-
նըմ նահատակ 435
- Zanolli Prof. Almo. — Un très an-
cien commentaire grec sur le Lévitique,
conservé en arménien 436
- Սարգսեան Հ. Գ. — Փարպեցւոյն Յառա-
ջաբանը յղկուած 444

ԳՐԱԿԱՆ

- Արսէն Երկար. — Վերաւոր աղօթք . . . 459
- Աճեմեան Մկրտիչ. — Բարի զիւանա-
գէտը 460
- Յովհաննէսեան Հ. Վ. — Ազուլոյ . . . 461
- Փէլիկեան Հ. Ե. — Ս. Նշան (Տաճար
Մ. - Ռաֆ. Վրժիթի ամարանոցին՝ Ազուլոյ) 462
- Քիւրտեան Յ. — Քուչակեան նոր տա-
ղաշարք մը 464
- Երեմեան Հ. Ս. — Գրական Գրոնիկ.
Գեղամ, Կոմիտաս Վարդապետ, Գրիգոր
Ջօհրապ, Աղեքսանդր Մանթաշեանց . . 493
- Գիտողութիւններ 494
- Կիւրդեան Բրոքի. Լեւոն. — Վերգիլեան
ծառը 506

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- Երեմեան Հ. Ս. — «Վասպուրական» . 473

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

- *** Վենետիկի Միջազգային գեղարուես-
տական ցուցահանդէսը (ԺԸ. Երկամեայ -
1932 479
- Մուշրաֆեան Զարեհ. — Գեղարուեստի
կազմաւորումը (Սպանիական փիլիսոփա-
յական մտածումը) 483
- ** Վենետիկի քարաշէն նոր կամուրջը . 495

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

- Գեորգ Կոյիւյ. — Հայաստան և Ֆրան-
սա (Թրգով. Ֆրանսերէնէ) 500
- Թովմասեան Հ. Թ. — Հայաստան և հայա-
գէտ բարձրաստիճան եկեղեցական մը . 503
- Խմբ. — Արձակուրդի յուշեր Մուրատեան
և Մ. - Ռաֆայէլեան վարժարաններու կեան-
քէն - Վենետիկ-Փարիզ 513

PHILOLOGIE

- Nahabédian P. G. — L'Architecture
des églises (recherche historique) . . . 419
- Safrastian A. — Les langues Chourri-
Midanni et Chatti 431
- Nahabed Chaïr. — Ode à la martyre
S.te Chanoum 435
- Zanolli Prof. Almo. — Un très ancien
commentaire grec sur le Lévitique, con-
servé en arménien 436
- Sarkissian P. G. — L'introduction de
l'Histoire de Lazare de Pharbe étudiée
et ordonnée 444

LITTÉRATURE

- A. Yergath. — Prière 459
- Adjémian M. — Le bon politique . . . 460
- Horhannessian P. V. — Asolo 462
- Païtchikian P. E. — St. Nïchan (Cha-
pelle du Collège M. - R. à Asolo) . . . 462
- Kurdian H. — Une nouvelle série
de chants de Koutchag 464
- Erémian P. S. — Chronique et notes
littéraires 484
- Gurékian Prof. Léon. — L'Arbre Vir-
gilien 506

RECENSIONS


- Erémian P. S. — «Vaspouragan» . . . 473

BEAUX ARTS

- *** XVIII Exposition International
d'Art à Venise 479
- Moutafian Zareh. — Formation de
l'Art (La pensée philosophique espagnole) 483
- ** Le nouveau pont de Venise 495

ECHOS d'ARMÉNIE

- Georges Goyau. — L'Arménie et la
France 500
- Tomadjian P. T. — Un prélat armé-
nophile et arméniste 503
- Réd. — Souvenirs de vacances des
Collèges Moorat et M. - Raphaël - Ve-
nise-Paris 513



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843-1932

ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՒ 10 - 11

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ Է

Հայ ճարտարապետութեան հոգին

(Շար. տես «Բազմալէպ» 1932, էջ 241)

Լ.Զ. Մինչեւ ցայս վայր՝ մեր գրածնե-
րով կամեցանք ցուցնել որ Հայք, նա-
խապատմական ժամանակներէ ի վեր,
չաղթական կամ թէ բնիկ ըստ Ս. Գրոց
ազգաբանութեան, ունեցած են իրենց սե-
փական և տեղական ճարտարապետու-
թիւնն, սկսած իրենց գմբէթածածուկ տնա-
կէն և «Բազիլիկալ» ոճի վրայ շինուած
բաշլայիկ (ախոռ) մինչեւ միջնադարեան
կեդրոնական շինուած գմբէթը չորս կա-
մարակապ սիւններու վրայ: Միանգա-
մայն կամեցանք մատի ծայրով դաշիւ,
զգացնելու չափ Հայկական ինքնօրէն ճար-
տարապետութեան հակառակորդներուն՝ թէ
Հայք կարիք չունէին ուղղակի օգտուելու

հարեան երկիրներէն, ուղղակի կ'ըսեմ,
իմանալով իրր հետեւորդ, ընդօրինակող-
ներ, քանզի ըսած ենք որ ազգերը ընդ-
հանուր կերպով փոխադարձ ազդեցութիւն
ունեցած են գեղարուեստի մէջ:

Երբ նախնի ժողովուրդներու գաղթա-
կանական հոսանքը դադրեցաւ և տեղա-
ւորուեցան ու արմատացան հողագնտիս
զանազան մասերուն վրայ, միայն Հա-
յաստանէն կամայ կամ ակամայ գաղ-
թողներ կամ տեղահանութիւններ տա-
րածուեցան դէպ ի հարաւ և արեւմուտք,
իրենց հետ տանելով ազգային մշակոյթ
և բնատուր արուեստ: Ասորեստանի հզօր
ինքնակալութիւններն այնպէս օգտուեցան